ԱՆՈՒՇ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՏԵՍՏԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

Յուրաքանչյուր լեզու սովորեցնելու ժամանակ անհրաժեշտ է սովորեցնել նաև տվյալ լեզվի քերականական կառուցվածքը, որը հնարավորություն է տալիս սովորողին ճիշտ խոսել: Տարրական դասարաններում քերականության ուսուցումը տարվում է կառուցվածքային խաղերի միջոցով, որոնք շատ ավելի արդյունավետ են, քան տեսական բացատրությունները: Սակայն բարձր դասարաններում, երբ աշակերտն արդեն ձեռք է բերել լեզվի իմացության որոշակի մակարդակ, նա հակված է ավելի ինքնուրույն աշխատել, ինչպես նաև տեսականորեն ընկալել տվյալ քերականական երևույթի առանձնահատկությունները, ինքնուրույն եզրահանգումներ կատարել: Նրան արդեն ուսուցչի առաջադրած պատրաստի կառուցվածքները, աղյուսակները չեն բավարարում: Սովորողը ձգտում է հասկանալ, թե ինչու՞ և ե՞րբ պետք է օգտագործի այս կամ այն ժամանակաձևը: Սա նշանակում է, որ սովորողներին քերականության ուսուցումը պետք է մատուցել արդեն տեսական հիմնավորումներով, ստեղծել կոնկրետ խոսքային իրադրություններ տվյալ քերականական երևույթի առանձնահատկություններն ու նրբերանգները բացահայտելու համար:

Ժամանակակից ուսումնական գործընթացում յուրաքանչյուր քերականական նյութի ներմուծումը կատարվում է կառուցվածքների կամ բացատրությունների օգնությամբ, իսկ յուրացումը և ամրապնդումը վարժությունների համակարգի օգնությամբ: Բնականաբար այս մեթոդով ուսուցման հետևողականությունն ապահովելու համար ուսուցիչը պարտավոր է հաջորդ դասին մեկ առ մեկ ստուգելու վարժությունների կատարումը, վերլուծելու սխալները, որը բավականին երկար ժամանակ է խլում և նյութը լավ յուրացրած սովորողների համար դասը դարձնում է ձանձրալի և անհետաքրքիր: Այս ամենից զատ աշակերտն այդպես էլ չի հայտնվում այն կոնկրետ խոսքային իրադրության

մեջ, որում օգտագործվում է տվյալ քերականական նյութը և այն փաստորեն նրա համար մնում է որպես տեսական գիտելիք:

Որոշ լեզվաբանների (Յա. Կոլկեր, Ե. Ա. Մասլիկո, Պ. Կ. Բաբինսկայա, Ա. Ն. Բուդկո, Ս. Ի. Պետրովա) և ուսուցիչների առաջարկած քերականական նյութի ներմուծման նոր եղանակը զգալիորեն տարբերվում է ավանդականից: Նրանք առաջարկում են նոր ներմուծվող ժամանակածևը ներկայացնել տեքստի շրջանակներում առանց բացատրությունների: Այնուհետև սովորողներին ներքաշելով խոսքային գործընթացի մեջ, զրույցի ընթացքում պետք է նրանց աստիճանաբար սովորեցնել օգտագործելու տվյալ քերականական երևույթը: Որից հետո սովորողների ուշադրությունը հրավիրվում է այն նախադասությունների կամ հատվածների վրա, որոնցում օգտագործվել է ուսուցանվող ժամանակածևը: Գրատախտակի վրա գրվում են տվյալ քերականական կառուցվածքին հանդիպադիր կառուցվածքները, որպեսզի աշակերտն ավելի կոնկրետ պատկերացնի դրանց տարբերությունները և հասկանա, թե ինչպե՞ս է օգտագործվում տվյալ ժամանակածը: Օրինակ Past Indefinite ժամանակածևը բացատրելիս ուսուցիչը կարող է գրատախտակի մի կողմում գրել Present Indefinite ժամանակածևով մի փոք-րիկ հատված, իսկ մյուս կողմում այդ նույն հատվածը Past Indefinite-ով: Այնուհետև նա կարող է սովորողներին հանձնարարել կարդալ տրված հատվածները և ուշադրություն դարձնել այդ հատվածներում օգտագործված բայաձևերին: Սովորողներն իրենք են նկատում այդ բայաձևերի միջև եղած տարբերությունները և փորձում բացատրել դրանց տարբեր գործածությունների իմաստը, բովանդակությունը:

Որից հետո ուսուցիչը հենվելով սովորողների եզրակացությունների վրա բացահայտում է Past Indefinite-ի կազմությունը, գործածությունը:

Սակայն այս մեթոդի կիրառման հետագա ընթացքը շատ էլ չի տարբերվում ավանդական ուսուցման եղանակից, որովհետև աշակերտներին դարձյալ հանձնարարվում են վարժություններ, որոնք պարզապես պետք է ստուգվեն դասարանում, դարձյալ աշակերտներին հեռու պահելով խոսքային այն իրադրության մեջ հայտնվելուց, որում կարդարացվեր սովորած քերականական նյութի գործածությունը:

Ընդունելով այն փաստը, որ քերականական նյութի յուրացման համար խիստ անհրաժեշտ է վարժությունների որոշակի համակարգի կատարումը,

մենք առաջարկում ենք տանը վարժություններ կատարելու հանձնարարականից զատ աշակերտի ձեռք բերած գիտելիքների ստուգումը դասարանում կատարել ուսուցողական քերականական տեստերի օգնությամբ: Այն նախ և առաջ շատ ավելի քիչ ժամանակ է պահանջում, քան վարժությունների մեկ առ մեկ ստուգումը և նույնիսկ հանձնարարությունը չկատարած աշակերտին հնարավորություն է ընձեռնում ինքնուրույնաբար հասկանալ ուսուցանված քերականական նյութի գործածությունը: Որպեսզի աշակերտը կարողանա ինքնուրույնաբար ուղղել իր թույլ տված սխալը ուսուցողական տեստում ապահովվում է հետադարձ կապի feedback-ի առկայությունը: Այսինքն տեստի կատարման ժամանակ եթե աշակերտը սխալ է թույլ տալիս, հաջորդ նախադասությունների մեջ տեսնելով ճիշտ կառուցվածքը, ինքն է ուղղում նախորդ նախադասության մեջ թույլ տված իր իսկ սխալը: Իսկ դա ուսուցողական տեսանկյունից շատ ավելի արդյունավետ է, քան ուսուցչի միջամտությունը և կատարած ուղղումները:

Ուսուցողական տեստի գործածությունը ուսուցման գործընթացում առաջին հերթին երկու նպատակ ունի.

1. տեղեկության ապահովում, որն անհրաժեշտ է ուսուցման ծրագրերի և ուսուցման արդյունավետության ուղիների մշակման համար.

2. ուսուցման գործընթացի կատարելագործում, որոշումների ընդունում, որը կատարում է հետադարձ կապի օգնության շնորհիվ (Բաշման Ֆ. Լ., Ադրիան Ս. Ժ., 1994):

Նախ և առաջ մենք պետք է ընդունենք, որ ուսուցման արդյունավետության համար անհրաժեշտ է անընդհատ տեղեկություն ստանալ, թե ի՞նչ արդյունք է տալիս այս կամ այն մեթոդը, ինչպե՞ս են սովորողները յուրացրել տրված քերականական երևույթները, ի՞նչը լավ չեն յուրացրել: Նման տեղեկություն կարելի է անընդհատ ստանալ ճիշտ կառուցված տեստերի օգնությամբ: Մեր տրամադրության տակ ունենալով այս տեղեկությունը՝ մենք կարող ենք համապատասխանաբար փոփոխել ուսուցման մեթոդները, ոչ արդյունավետը փոխարինել նորով, վերացնել թերությունները: Ուսուցման գործընթացը՝ և դասավանդումը, և սովորելը անընդհատ զարգացող և փոփոխվող մի գործընթաց է, որի կատարելագործման համար անհրաժեշտ է որոշումներ ընդունել հիմնվելով հետադարձ կապի (feed-back-ի) վրա: Ուսուցողական տեստի տված

տեղեկության շնորհիվ ուսուցիչը կարող է փոփոխություններ մտցնել ծրագրի մեջ և բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը:

Եթե տեստի անցկացումից հետո ուսուցիչը տեսնի, որ սովորողները չեն կարողացել գտնել իրենց սխալները և ուղղել դրանք, կարող է վերլուծել այդ սխալները և բացատրել, թե ինչպե՞ս կարելի է վերացնել դրանք, ինչի՞ վրա պետք է սովորողները կենտրոնացնեն իրենց ուշադրությունը: Այս բացատրությունները ևս երկար ժամանակ չեն խլում, սակայն ապահովում են անհատական աշխատանքը յուրաքանչյուր սովորողի հետ (ուսուցիչը խմբավորելով սխալները, բացատրում է դրանք՝ ինչու՞ է այս ձևը սխալ, իսկ մյուսը ճիշտ, ի՞նչ վարժություններ պետք է կատարեն այն սովորողները, որոնք սխալներ են թույլ տվել): Այսինքն՝ յուրաքանչյուր սովորող կստանա իրեն հետաքրքրող հարցերի պատասխանը և համապատասխան հանձնարարություն՝ ելնելով թույլ տված սխալներից:

Ուսուցողական տեստից ստացած տեղեկություններն օգնում են նաև սովորողին ավելի նպատակաուղղված դարձնել իր աշխատանքը, վերափոխել այն ավելի լավ արդյունքների հասնելու նպատակով: Այստեղ է, որ ուսուցիչը նրանց կարող է ուղղություն տալ, թե ո՞ր վարժությունների օգնությամբ նրանք կարող են հաղթահարել իրենց սխալները: Սովորողները գիտեն, թե ի՞նչ պետք է արվի և ինչու՞ (ինչու՞ պետք է շարունակել վարժություններ կատարել տանը, ո՞ր տիպի վարժություններն են իրենց անհրաժեշտ): Ոչ թե ուսուցիչն է պարտադրում սովորողներին աշխատել տանը, այլ սովորողներն իրենք են զգում այդ աշխատանքի կարիքը, իսկ ուսուցիչը միայն ուղղություն է տալիս այդ աշխատանքին: Այս շահագրգռվածությունը ևս բարձրացնում է դասի արդյունավետությունը, սովորողի հետաքրքրությունը թե՛ դասի, թե՛ տնային աշխատանքների նկատմամբ, չէ՞ որ սովորողը կարողանում է իր առջև ծառացած դժվարություններն ինքնուրույն հաղթահարել (իհարկե ուսուցչի հմուտ ղեկավարությամբ):

Սրանք են այն հիմնական պատճառները, որոնք մեզ թելադրում են օտար լեզվի քերականության հատկապես ժամանակաձևերի ուսուցման գործընթացում ուսուցողական հարմարեցված տեստերի գործածության անհրաժեշտությունը: